Հանրային քննարկում. նորարարությունը ֆինանսական համակարգում

06.02.2026

ՀՀ կենտրոնական բանկը, նպատակ ունենալով խթանել նորարարությունը և մրցակցությունը ֆինանսական համակարգում, նախաձեռնում է հանրային քննարկում՝ շուկայի մասնակիցների կողմից նորարարական ծառայությունների ներդրման ընթացքում առկա խոչընդոտները բացահայտելու նպատակով: Հավաքագրված տվյալները կկիրառվեն նորարարությունը խթանող գործիքների (ֆասիլիտատոր) ներդրման նպատակահարմարությունը գնահատելու համար:

Ֆինտեխ էկոհամակարգը ամբողջ աշխարհում շարունակաբար զարգանում է՝ հաճախորդներին տրամադրելով ճկուն և անհատականացված ֆինանսական ծառայություններ: Ֆինտեխ ընկերությունները խթանում են մրցակցությունը ֆինանսական համակարգում՝ նպաստելով առավել արդյունավետ և մատչելի ֆինանսական ծառայությունների մատուցմանը: Ավելին, նորարարության ֆասիլիտատորները ծառայում են որպես կարևոր գործիքակազմ, որը թույլ է տալիս նորարարական ծառայությունների մուտքը շուկա:

Այսպիսով, հանրային քննարկումը նպատակ ունի բացահայտել շուկայի մասնակիցների կողմից նորարարական ծառայություններ մատուցելու ընթացքում առաջացող հիմնական խոչընդոտները: Միևնույն ժամանակ, հանրային քննարկումը նաև նպատակ ունի գնահատել նորարարության ֆասիլիտատորների ինչպես օրինակ՝ նորարարության կենտրոնի (innovation hub) և կարգավորող ավազատուփի (regulatory sandbox) անհրաժեշտությունը և պահանջարկը շուկայում:

- Հանրային քննարկում. նորարարությունը ֆինանսական համակարգում
- Մասնակցության ձևաթուղթ